բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

Նման պայմաններում Դատարանը հաստատված է համարում հայցվորի կողմից վկայակոչված փաստերը, ինչը տվյալ դեպքում բավարար է հայցը հիմնավորված գնահատելու և այն բավարարելու համար:

Դատարանը գնահատելով գործում եղած ապացույցները, ղեկավարվելով ներքին համոզմամբ, գտնում է, որ հայցապահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

6.Դատական ծախսեր.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի՝ Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումար 50.000 ՀՀ դրամ:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, հետևաբար վճարված պետական տուրքի գումարը պետք է բռնագանձել Պատասխանողից:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայցը բավարարել.

Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարի 01.11.2024թ. թիվ 210-Ա/3 հրամանը՝ «Տեսակենտրոն» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից հօգուտ «Տեսակենտրոն» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ վճարված պետական տուրքի գումարը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր

կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am